

40  
Տ

մ տակութային հանդես

# Հայ արվեստ

ARMENIAN ART • CULTURAL MAGAZINE • 3/2006

ISSN 1829-0272





















Հրամցի մուտ, 1971 թ.



Հրարգելք, 1978 թ.

տով, Թթիլիսի, Ամա Աբա, ինչպես եւ արտասահմանյան Երկրներ: Նա արժանացավ ժողովրդական նկարչի կոչման, պետական մրցանակի, ընտրվեց Ռուսաստանի Ֆեդեռացիայի գեղարվեստի ակադեմիայի անդամ:

Հավատարիմ «ժամանակի շունչը դարձիր ու մի դավիր քո քնարին» չարենցյան խորհության՝ Հակոբյանը քայլեց առաջ ու չքողարկեց փոփոխվող իրականության թելադրած մորմոքող, սրտացավ իր ապրումները: Եվ կարեւորն այն է, որ նրա ստեղծագործությունը ոչ թե սահմանափակվեց իրենով, այլ ակնառու ազդեցություն ունեցավ խորհրդային և հետխորհրդային արվեստի վրա՝ գնահատվելով որպես «խստաշունչ ոճի» առաջնեկներից մեկը, որպես մաքուր արվեստի մունետիկ:

2005-ին Սոսկվայում կայացած ՄՊՀ երկրների կերպարվեստի առաջին ցուցահանդեսի կատալոգում նկարիչների միությունների միջազգային կոնֆեդեռացիայի նախագահ Վ. Սիդորովը գրել է. «... Աշխարհում լայն ճամաչում վայելող Հակոբ Հակոբյանի ստեղծագործությունը նորովի է բացահայտում Հայաստանի իմաստ-

նությունն ու գեղեցկությունը»:

Վերջերս Հակոբյանի նկարահանդսը ջերմ արձագանք ունեցավ նաեւ Լու Անջելեսում: Ամերիկյան ժողովրդական արվեստի թանգարանի տնօրինության ընտրությանը (Դայոց ցեղասպանության հիշատակի ծրագրով) հայ նկարչի հին ու նոր շրջանի 40 կտավները ներկայացվեցին «Տեսիլքներ Հայաստանի» խորագրով: «Լու Անջելես թայմս» թերթում տեսարան Պետեր Ֆրանկը գրել է. «Խուսափելով փրուն սոցուալիզմից՝ Հակոբյանն իր արվեստը մոտեցրել է իր ժողովրդի հողեղեն, ներքին զգացողությանը: Նրա արվեստը հուզիչ է. ներազրո, որովհետեւ ջերմացած է անաղմուկ սիրով հանդեպ իր փոքր երկիրը՝ Արարատը, դաշտերը, ծառերն ու նոյնիսկ ճամփերին ընկած քարերը...»: Հայառությամբ գիտակցում ես, որ միջազգային առումով արժանին է մատուցվում ժամանակի ոգով՝ տաճանապող սիրով շնչող հակոբյանական աշխարհին, մեր աշխարհին:

Ավարտեմ խոսքս անմոռաց մի հուշով: 1971-ի սեպտեմբերի 10-ի երեկոյան Հակոբյանի ջրաներկ մի աշխատանքը ցույց տվեցի ծերունազարդ Սարյանին: Նա երկար նայեց ու ասաց. «Այս նկառիք շատ զգայուն հոգի ունի: Տե՛ս, ամպերը մի քիչ չոր է նկարել, որպեսզի կապ ստեղծի որթատունկերի հետ: Աշուն է, տեսնո՞ւմ ես ծառը, սա ծիրանի ծառ է, այնպես է նկարված, որ հսկում է այգուն: Այս նկարիչը գիտի տեսնել, հաղորդվել բնության հետ: Ապրի՛, իրաշալի՛ գործ է արել...»:

Իր «իրաշալի գործը» Հակոբյանը շարունակում է ինչպես սկսել էր, շարունակում է երիտասարդական ավյունով: Այսօրվա ապրումների ծշմարիտ դողանց են նաև շատերի համար անսպասելի, ազնիվ նտավորականի ներքին այրումով գրած հոդվածները: Ութսունչորսամյա արվեստագետը «պատմեշի վրա» է, երկրի նվիրյալների առաջին շարքում:



## Հակոբ Հակոբյան Hagop Hagopian





# ԱՐՎԵՏԱՍԱԿՑԻ ԽՈՍՔ

Աշոտ Առաքելյանի գեղանկարչական արվեստի առանձնահատկությունն այն է, որ արեւելավրոպական եւ արեւմտաեվրոպական ոճը միաձուլել եւ հասցել է կատարյալ աստիճանի՝ արտահայտված կենդանի լարվածության եղանակի մեջ:

Աշոտ Առաքելյան նկարիչը աստիճանաբար գտնում է իր հաստատում տեղը չեխական գեղանկարչական աշխարհում:

Ոճերի եւ ուղղությունների արդի խառնաշփոթության մեջ Աշոտ Առաքելյանի նկարները պատկանում են ֆիգուրատիվ անհատականություն արտահայտող արվեստի բնագավառին, որի մեջ խորհրդանշական եւ գեղագիտական դասնում են հասկանալի ու համոզիչ: Գեղանկարչի այդ գործերի հնաստավիրական ենթաերթ արտահայտում է մարդու եւ բնության լիահունչ ներդաշնակություն: Եւ այսօր արդեն ավելի որոշակիորեն է ընդգծվում այդ երանելի ներդաշնակությունը:

Աշոտ Առաքելյանի բնամկարների ներդին անադարտության ու հաջողության հիմքը ֆլորայի եւ ֆանտազիայի միջև արտահայտությունը է:

1992թ.-ից տեղափոխվել է Զեխիա (կոնց հայրենիքը):

Սորավիայի նկարիչների միության անդամ է՝ «ազատ նկարիչ» կարգավիճակով:

Սուաշին ցուցահանդեսը՝ 1996 թ.,  
Ուիերսկե Յրադիշտե (Զեխիա),

«DIVADELINI» գալերիա:  
1998-ից գրեթե ամեն տարի

մասնակցել է խմբակային ցուցահանդեսների կամ անհատական ցուցահանդեսներ է ունեցել:

1998, Բոնն գալերիա D Mathias,  
2000, Լուհաշովիցե, ART GALERIA NA KOLONADE  
գալերիա, 2004, Օլոմուց (Զեխիա):

Ցուցադրվել է նաև Զեխիայի Ուիերսկե Յրադիշտե,  
Պրերով քաղաքներում, Գերմանիայում, Սլովակիայում:

2004, 2005թ. DIVADELINI GALERIA-ի կողմից  
պատվոգիր է ստացել նկարչության ասպարեզում ունեցած ժառայությունների համար:

2005-ից Սրբախի նկարիչների միության անդամ է  
(անհատական ցուցահանդես Ստեփանակերտում):

2006թ., ցուցահանդես Երևանում (ԱՕԿՍ):

մի ուրիշ աշխարհ, մի ուրիշ չափի եւ ուրիշ հորիզոնի աշխարհ:

Աշոտ Առաքելյան գեղանկարչության սեղանական ընտրում է համաձայն իր ներքին զգացորդության, ազատում է դրանք իրականության կապերից, իրական եւ նյութեղեն աշխարհից եւ դարձնում երեւակայական ու ոգեղեն աշխարհ: Իսկ այնտեղ դրանք բողնում է կյանքի ու նրանու տեղի ունեցողի համատեքստում, միաժամանակ լրացնում այնպիսի սիեմաներով ու գոյներով, որպիսիք թերեւս իզուր կիհնի փնտրել մեզ շրջապատող միջավայրում: Ա. Առաքելյանը հաստատամորեն ձգտում է մեզ համար բացել մի երանելի տեսարան, որն էակեն տարբերվում է իրական աշխարհից, բայց քննչորեն պատկերում է այն:

Աշոտի նկարները մեզ կախարդում են իրենց ինքնատիպությամբ, գեղագիտական լեզվով: Դրանք ստեղծված են բաց սրտով մարդկանց համար, հագեցած են հայաստանի մեր գեղեցիկ կյանքի հաճելի ու նվիրական արժեքներով:

Յոզեֆ Մարիաս Միհնարիկ  
Զեխիայի ակադեմիական  
նկարիչ

## ԱՇՈՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ Ashot Arakelian



Արդյունաբանություն No2 / Modern still life No2, 40x60, 2005




















**ԱՐԱՄԵ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՅ**  
**ARAME ART GALLERY**

Հայ անվանի գեղանկարիչների  
 ստեղծագործությունների  
 ցուցահանդես-վաճառք

Ռուբեն Արովյան  
 Էմիլ Գազագ  
 Սարգիս Համալբաշյան  
 Գևորգ Եղիազարյան  
 Տարոն Մուրադյան  
 Արմեն Գևորգյան  
 Շոթա Ոսկանյան  
 Ավետիք Չքչյան  
 Մարատ Մարգարյան



Էմիլ Գազագ, "Սուրբ Սոսիկա"

Վաճառված աշխատանքների հետ  
 տրվում են դրանց  
 խակությունը հաստատող փաստաթղթեր  
 և արտահանման արտոնագրեր:

Առարումն անվճար է :

Հավելյալ ծառայություններ

- ◆ Եվրոպական արտադրության  
 բարձրակարգ շրջանակների  
 պատրաստում
- ◆ Հին և վնասված նկարների  
 ռեստավրացիա

Բաց է ամեն օր, ժամը 11.00-ից 20.00-ը

ՀՀ, 375002, Երևան,  
 Ամիրյան, 13

**ԱՐԱՄԵ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՅ**  
 E-mail: arameart@arminco.com

Հեռ.: (374 1) 53 92 65

Բջջ.: (374 9) 41 69 27

<http://www.aramegallery.com>